

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/2

14 փետրվարի 2014 թ.

Քննարկվեց «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ լիազորված անձի 03.02.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ հետքացթողումային հսկողության վարչության 05.12.2013 թ-ի թիվ 501 ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 15.11.2013 թ-ի թիվ 501-Ա հրամանի «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն) կողմից ՀՀ մաքսային սահմանով ապրաքնների տեղափոխման օրինականության, մաքսային վճարների հաշվարկման ու վճարման ճշտության նպատակով ընկերությունում իրականացվել է հետքացթողումային հսկողություն, ստուգելով 2011 թ-ի ապրիլի 29-ից մինչև հսկողության ավարտն ընկած ժամանակահատվածում «Ներմուծում ազատ շրջանառության համար» ռեժիմով ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքում հայտարարագրված ապրանքների համար մաքսատուրքի արտոնության կիրառման ճշտությունը: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հետքացթողումային հսկողության վարչության 05.12.2013 թ-ի թիվ 501 ակտը, որի դեմ «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ լիազորված անձի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել դիմում-գանգատ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ԻՀ և ՎՎԻ վարչության հետաքննության բաժնի հետաքննիչ Վ.Չարխիֆալակյանի 23.01.2014 թ-ի որոշման համաձայն «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ տնօրեն Սամվել Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի և 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 83150214 քրեական գործը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ տնօրեն Սամվել Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի և 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 83150214 քրեական գործը, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ լիազորված անձի 03.02.2014 թ-ի դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Գլոբալ Մոթորս» ՓԲԸ լիազորված անձի 03.02.2014 թ-ի դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ